ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻԻ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏԻ ԵՎ ՄԱՅՐԱՊԵՏ ԻՇԽԱՆՈՒՀԻ ՀՌԻՓՍԻՄԵ ԹԱՀԻՐՅԱՆՑԻ ՄԱՍԻՆ

Ս. Գայանե վանքի եկեղեցուն կից տարածքում է հանգչում Թբիլիսիի կուսանաց Ս. Ստեփաննոս անապատի վերջին մայրապետ իշխանուհի Հռիփսիմե Թահիրյանցի մարմինը: Նրա տապանաքարի մարմարե սալին գրված արձանագրությունը, մյուսների նման, չի հիշատակում հանգուցյալի ծննդյան և մահվան թվերը: Այս փաստը առիթ հանդիսացավ մոտիկից ծանոթանալու Հայ Եկեղեցու հոգևոր սպասավոր, նվիրյալ հայուհու պատմությանը, թե ո՞վ է եղել նա, ի՞նչ ծառայություններ է մատուցել Հայ Եկեղեցուն, ժողովրդին, որ արժանացել է Ս. Գայանե վանքի հանգստարանում իր վերջին հանգրվանը գտնելու պատվին:

Դիմեցինք համապատասխան փաստերի որոնմանը, որի ընթացքում ի հայտ եկան արխիվային մի շարք փաստաթղթեր, վավերագրեր, անգամ ժամանակակիցների կողմից թողած աշխատություններ:

Անհրաժեշտ է նշել, որ մինչև Ս. Ստեփաննոս կուսանաց անապատի հիմնումը Թիֆլիսում կուսանոց չի եղել, այս անապատի հիմնադրումը առնչվում է իշխաններ Բեհբութովների անվանը:

Սուրբ Ստեփաննոս անապատը հիմնադրվել է Նոր Ջուղայի Ս. Կատարինե անապատի օրինակով 1724 -1726 թվականներին Բեհբության իշխանների կողմից և անմիջական հովանավորությամբ: Սկզբնական շրջանում կույսերին, աղոթելու և բնակվելու համար, նրանց են տրամադրում իրենց բնակարանից մեկ սենյակ: Այնուհետև կառուցում են Ս. Ստեփաննոս եկեղեցին, որը հայտնի է Խոջիվանք անվամբ: Այն գործել է մինչև 1920-ական թվականները: Սկզբնական շրջանում 2-3 աղջիկներ են եղել մենաստանում: Հետագայում միաբանությունը աստիճանաբար համալրվում է բարեպաշտ մեծահարուստ իշխանների դուստրերով: Նրանց ներդրած միջոցներով բարեկարգվում է անապատը, և ավելանում է նրանց թիվը: Վանքը երկար ժամանակ եղել է Մելիք Բեհբուդյանցի ընտանիքի անմիջական ազդեցության ներքո և վանքի մեծավորուհին նշանակվել է նրանց կողմից: «Սարկավագուհիներ ունենալու սովորությունը ներմուծել է Թադեոս արքեպիսկոպոսը»: Վանքի մեծավորուհին միշտ ունեցել է ավագ սարկավագության կոչում, կրել է մեկ կամ երկու լանջախաչ, իսկ մատենամատին՝ մատանի[1]:

Որպես կանոն կուսանաց անապատներն ու վանքերը եղել են ուսում ու դպրութ-

[1] Տե՛ս **Խորեն քահանա Խոցյան**, Թիֆլիսի Ս. Ստեփաննոս կուսանաց անապատի պատմությունը, Թիֆլիս, 1914 թ.:

յուն տարածող կրթավայրեր, որբերի և հիվանդների խնամակալ հաստատություններ և զբաղվել բարեգործությամբ:

Ս. Ստեփաննոս անապատի միաբանության անդամները թեև մեծահարուստ իշխանների դուստրեր էին, սակայն նրանցից շատերը չեն իմացել մայրենին և գրել-կարդալ: Նրանք միմյանց հետ խոսելիս են եղել վրացերենով: Անգամ մայրապետներից ոմանք են գտնվել նույն վիճակում: Այդ պատճառով տարիներ շարունակ վանքում չի եղել գրագրություն, որն անչափ անհրաժշտ էր տնտեսությունը վարելու և անապատի պատմությունը պահպանելու համար: Սակայն միաբան կույսերից ոմանք սկսել են սովորել գրել-կարդալ: Նրանք՝ լինելով մեծահարուստ ընտանիքների զավակներ, միջոցներ են տրամադրել, օգնություն կազմակերպել Ս. Ստեփաննոս անապատի և եկեղեցու բարեկարգման գործին, միաբանության անդամների համար բնակվելու, ապրելու և աղոթելու կենսական նպաստավոր պայմաններ ստեղծել, բարեգործական աշխատանքներ կատարել[2]:

Անապատն իր գոյության ընթացքում հաջորդաբար ղեկավարվել է շուրջ տասը մայրապետների կողմից, որոնք, բացառությամբ մեկի, համարվել են պարկեշտ, ձգտել են անապատը բարեկարգել նյութապես, բարձրացնել նրա բարոյական հեղինակությունը[3]:

Ս. Ստեփաննոս անապատի վերջին մայրապետն է եղել իշխանուհի Հռիփսիմե Թահիրյանցը, որն ընտրվել է 1911 թվականի հոկտեմբերին: Նա համարվել է Կուսանաց անապատի ամենաձեռնհաս և կարող մայրապետը: «Մայրապետ Թահիրյանցը դեռ մայրապետությունից էլ առաջ հայտնի է շատ-շատերին որպես մի բարի, առաքինի և բարեպաշտ անձնավորություն, որի սիրտը բաբախում է շատերի համար: Սխալ չի լինի ասել, որ նա մեր մեջ եղած բոլոր բարեգործական և ազգային հիմնարկությունների օգտին ձգել է իր լուման, իր կարողացածի չափ օգնել ամենքին:

Մայրապետ Հռիփսիմե Թահիրյանցը այցելել է Երուսաղեմ՝ Ս. Տեղերը, իր հետ տանելով խոշոր գումար-նվեր հօգուտ Երուսաղեմի հայոց վանքի: Այսքան իր առաքինի և բարի գործերի համար արժանացել է շատ-շատերի քաղցր ուշադրությանը: Զանազան կաթողիկոսներից վարձատրվել է լանջախաչով, ականակուռ խաչով, մատանիով, իսկ Երուսաղեմի մի պատրիարք շնորհել է շքեղ ոսկե խաչ Կենաց փայտի մասունքով»,- գրում է Խորեն քահանա Խուցյանը իր «Ս. Ստեփաննոս կուսանաց անապատի պատմությունը» գրքում[4]:

Աբել աբեղան էլ գրում է. «Վանքի մեծաւորուհին միշտ ունեցել է աւագ սարկաւագութեան կոչում, կրել է մէկ կամ երկու լանջախաչ, իսկ մատնեմատի վրայ՝ մատանի: Վանքի վերջին մեծաւորուհին եղել է քոյր Հռիփսիմէ Թահիրեանցը՝ հեղինակաւոր և պատկառազդու մի անձնաւորութիւն: Այսօր Մայր Աթոռում պահվում են էջմիածնի վանքին ձօնուած իր նուէրներից մի քանիսը. Վեհարանում, Խրիմեան Հայրիկին նո-

---

[2] **Աբել Աբեղայ**, Հայ Եկեղեցու սարգավագուհիները, Նյու Յորք 1991, էջ 46-47: **Խորեն քահանա Խուցյան**, Թիֆլիսի Ս. Ստեփաննոս կուսանաց անապատի պատմությունը, Թիֆլիս, 1914, էջ 18:

[3] **Խորեն քհն. Խուցյան**, նշվ. աշխ., էջ 27:

[4] Նույն տեղում, էջ 71-72:

ւիրւած էջմիածնի տաճարի պատկերը արծաթեայ թելերով գեղեցիկ մի ասեղնագործութիւն, ինչպէս նաեւ Մայր Տաճարի փայտեայ դռները: Գլխաւոր դռան վրայ կարդում ենք հետեւեալ արձանագրութիւնը. «Յիշատակ Աւագ սարկաւագուհի Հռիփսիմէ Աղեք. Թահիրեանց ՌՅԼԸ [= 1889]»[5]:

Ս. Ստեփաննոս կուսանաց վանքը իր միաբանությամբ և մայրապետի գլխավորությամբ գործում է մինչև 1920-ական թվականները:

Այդ տարիներին ծավալված հետապնդումներից զերծ չմնացին նաև Թիֆլիսի Ս. Ստեփաննոս և Շուշիի կուսանաց անապատները, որոնք փակվեցին և դադարեցին գործելուց: Միաբանության անդամները ցրվեցին տարբեր կողմեր և սկսեցին մի կերպ պաշտպանել իրենց գոյությունը:Նրանցից շատերն ընկան ծանր կացության մեջ:

Այս հանգամանքն ավելի անտանելի վիճակի մեջ է գցում մայրապետ իշխանուհի Հռիփսիմե Թահիրյանցին: Ապրուստի միջոցից զրկված, դեգերելով տարբեր տեղեր, հարկադրված՝ 1927 թ. մայիսի 24-ին գրավոր մի դիմում-խնդրագիր է գրում Վեհափառին, որում ասվում է. «Վաղուց հայտնի է Սրբազանագումար Խորհրդիդ, որ վերջերս քաղաքական անցուդարձի պատճառով Տփխիսի կուսանաց հինավուրց մենաստանը այն փայլուն և ապահով վիճակի մեջ չէ, որի մեջ կար առաջ, միաբանության բնակարանները գրավված, միաբանությունը ցիրուցան, պատսպարված ո՛րը բարեկամի, ո՛րը ծնողների և ոմանք էլ զանազան ծանոթների հովանավորության ներքո, մի կերպ քարշ են տալիս իրենց ՈՂՈՐՄԵԼԻ կացությունը, իսկ ես, դժբախտս՝ զրկված և՛ ծնողներից, և՛ բարեկամից, ծերությանս հասակում, ինքս վատառողջ, այս ու այն ծանոթին դիմելով ապրում եմ մի կերպ, վերջին հուսահատությանը հասած: Շատ անգամ են ինձ դրդել տանջանքներս ու նեղություններս նույնիսկ անձնասպանության դիմել և վերջ տալ ընդմիշտ հուզվող հոգուս և տանջանքի ենթարկված գոյությանս, բայց ի նկատի ունենալով անունս և կոչումս՝ աշխատել եմ ցրել այդ անպատվաբեր մտքերը: Այսօր, որ իմ անցյալը շատ լավ հայտնի է ինչպես Վեհափառ Հոր և Սրբազանագումար Խորհրդիդ, քան թե մի ուրիշի՝ Ձեր կողմից էլ մոռացված՝ տառապում եմ վերջին թշվառությանը հասած ու ստիպված եմ ծերությանս հասակում մուրացկանության դիմել: Սրբազանագումար Հայրեր, քանի ամիս առաջ լսեցի, որ Խորհուրդդ նկատի ունենալով իմ դրությունը՝ որոշել էր էջմիածին հրավիրել ինձ և մի կտոր հաց ու օթևան տալով հնարավորություն տար ինձ կյանքիս վերջին օրերս անխռով անցկացնել, և ահա այդ օրվանից անցան ամիսներ, և ես շարունակում եմ մնալ նույն թշվառության մեջ և այդ մասին չկա ոչ մի կարգադրություն: Այժմս սույն խնդրագրով խնդրում եմ՝ եթե կան հանգամանքներ, որոնք արգելք են լինում իմ էջմիածին տեղափոխվելուն՝ այն դեպքում նշանակել ինձ ամսավճար, որը ստանալով կարողանամ քարշ տալ ողորմելի կացությունս:

Խոնարհաբար խնդրում եմ, այս մասին իրազեկ անել նաև Վեհափառ ՀՈՐՍ:

Մայրապետ Հռիփսիմե Թահիրյանց:

---

[5] **Աբել Աբեղայ**, նշվ. աշխ., էջ 46-47:

* * *

Մինչ այդ, 1925 թվականի սեպտեմբերի 20-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Հինգերորդին է դիմում Շուշի քաղաքի լքված Կուսանաց անապատի միաբան սարկավագուհի կույս Նունե (Նախշուն) Սարգսյանը՝ գրելով. «Վեհափառ Տեր, արտաքին չարության, ներքին անբարտավանության հետևանքով Հայաստանի շատ գավառների հետ միասին կործանվեց և գեղեցիկ Շուշին և նրա մեջը մեր մենաստան անապատը:

Կոտորածից մնացած ժողովրդի հետ միասին մենք երկու կույսս՝ մայրապետ Հռիփսիմեն և ես, գրեթե մերկությամբ փախանք, ապաստան գտանք Անդրկասպյան երկրի՝ Պալտարածք (Ասխապատ) քաղաքը: Վեց տարի ապրել ենք դռնետուն, ծանոթների ողորմածությունից ընկած փշրանքներով ու կիսամերկ, բայց չենք դիմել ՁԵԶ, հոգևորականության մայր՝ խնամակալ Հայրապետիդ, հուսալով թե Դուք կհետաքրքրվեք Ձեր կորած դուստրներով:

Սակայն, անշուշտ բազմազբաղ լինելու հետևանքով, մոռացության տվիք մինչև այժմ, երբ մենք անպատիվ մուրացկանության և սովի ձեռքին էլ չենք դիմանում, մենք ենք զեկուցանում Ձեզ մեր դրությունը:

Կույս Հռիփսիմեն մոտ 90 տարեկան զառամյալ վիճակում ինձ ուղարկել է զեկուցանել Ձեզ և ասել, որ մենք հոգևորականներ ենք, մեր ամբողջ կյանքը մանկությունից սկսած նվիրել ենք վանական կյանքին ու այսօր սովամահ ենք լինում: Դուք Ձեր բարձր կոչման շնորհիվ պահում, խնամում եք Էջմիածնի միաբանությունը: Հաճեցեք տարածել այդ խնամքը և մեզ վրա: Մենք Հայոց Եկեղեցու համար խորթ զավակներ չենք եղել:

Այժմ, երբ մեր երկիրը խորհրդային իշխանության ջանքերով ավերակներից հարություն է առնում, նոր կյանքով տնտեսապես բարձրանում է և ի թիվս ժողովրդի, և Ս. Էջմիածնի միաբանությունն է այդ ընդհանուր տնտեսության բարիքը վայելում: Մի թույլ տաք, որ մենք՝ երկու վաստակավոր կույսս, սովամահ լինենք վանքերից դուրս և օտար տեղերում:

Խնդրում ենք Ձեզ. Վեհափառ Տեր, կամ մեզ մի կացարան տաք և մեր կյանքն ու ապրուստն ապահովեք մինչև մեր մահը և կա՛մ Ձեր կտրական խոսքն ասեք, որ ես հաղորդեմ կույս Հռիփսիմեին, և մեր գլխի գալիքը գիտենանք:

Ձերդ Ս. Օծության ամենախոնարհ սարկավագուհի Նունե (Նախշուն) Սարգսյան[6]:

* * *

Ծանոթանալով կույսերի դիմումների բովանդակությանը՝ մտովի տեղափոխվում ես տվյալ ժամանակաշրջանը և պատկերացնում, թե երկրում ստեղծված այդ դժնդակ օրերը ինչպիսի ծանր պայմանների մեջ են գցել առանց բացառության բոլորին: Անգամ կարծիք ստեղծել, թե էջմիածնի միաբանության անդամները գտնվում են բարվոք

[6] ՊՊԿԱ , Ֆ-409, ց-1, գ-3198, թ-2, ձեռագիր բնագիր:

վիճակում, իսկ իրենք՝ ոչ, չկարծելով, որ հոգևոր առաջնորդի վիճակն ավելի ծանր է: Չնայած էջմիածինը գտնվում է ծանր պայմաններում, սակայն Վեհափառը հնարավորություն է գտնում և նրանց 15 ռուբլի ամսավճար նշանակում ապրելու համար:

Ինչ վերաբերվում է իշխանուհի Հռիփսիմե Թահիրյանցի ծննդյան և վախճանման թվականներին, առկա փաստերի հիման վրա կարող ենք եզրակացնել որ, հոգելույս Հռիփսիմե մայրապետը պետք է ծնված լիներ մոտավորապես 1840-1841 թվականներին (նա կուսանոց է եկել մայրապետ Գայանեի ժամանակ), իսկ վախճանվել է խոր ծերության հասակում, 1934 թվականին, Ս. էջմիածնում, որտեղ արդեն բնակվելիս և ապրելիս է եղել:

Այդ պատճառով, նկատի ունենալով հանգուցյալի հոգևոր և ազգանվեր ծառայությունները, էջմիածինը որոշել է նրա մարմինը հողին հանձնել Սուրբ Գայանե վանքի եկեղեցուն հարակից տարածքի հանգստարանում: Մահից հետո Վեհափառ Հայրապետի հրամանով նշանակված Եղիշե վարդապետի և Տ. Նիկողայոս քահանայի կողմից 1934 թվականի օգոստոսի 24-ին կազմվում է «հանգուցյալ մայրապետ Հռիփսիմե Թահիրյանցի գույքի գույքացուցակ» փաստաթուղթը՝ բաղկացած 135 անուն կենցաղային առարկաներից: Ուստի կարելի է եզրակացնել, որ նա վախճանվել է 1934 թվականին[7]:

[7] ՊՊԿԱ, Ֆ-409, ց-1, գ-2722, թ-7, ձեռագիր բնագիր: